



Զահրատ

Բախտախաղ

Երբ քեզ տեսայ

Տեսայ չտեսայ

Ահա ըսի ֆլօշ ռուայեալ մ'է որ կ'անցնի

Ամբողջ ռէսքս ոտքերուն տակ փռէի

Մինչեւ դուն

Ման կու գայիր տպարանէն նոր ելած

Հագարնոցի մը պէս թարմ

Հագարնոցին չափ մաքուր

Եւ անոր պէս խոստումներով բեռնատր

Ման կու գայիր ոստոստուն

Փոքր ճերմակ գնդակին պէս որ արագ

Կը ցատքոտէ շուրջպարին վրայ սեւ ու կարմիր թիւերուն

Այդ գնդակին պէս որ աչքեր ու հոգիներ կը գերէ

Եւ անոր չափ քմահաճ

Կը քալէիր անվրդով

Կրան շլէմին արհամարհոտ նայուածքով

Օնէտոներուդ տարողութեան գիտակից

Միւրքոնթրի մը պէս հպարտ

Ու ճամբան

Միլեզգինը որ բացօթեայի նարտ կը խաղար ծառին տակ
Երբ քեզ տեսաւ
Տեսաւ չտեսաւ
Պոռաց ազահ ուրախութեամբ մը Տիշէշ